ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ք. Հրազդան, Սպանդարյան փող. 24/1, *Հեռ. /060/ 713-491*

№ 553-07
30 / 23 /2022թ.

Գնորդ՝ **Արմինե Դավեյանին**
/ք.Երևան,Օհանովի փողոց 14շ.,34բն./

Պարտապանին առաջարկվել է տասնհինգօրյա ժամկետում ինքնակամ ազատել ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 202-րդ շենքի թիվ 3 բնակարանը, հակառակ դեպքում նշված բնակարանի վտարումը կկատարվի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածով՝ առաջարկվում է, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 202-րդ շենքի թիվ 3 բնակարանը հարկադիր վտարման կատարողական գործողությունների կատարումն ապահովելու համար, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեպոզիտ հաշվին մուծել համապատասխան ծախսերի կամ դրանց մի մասի կատարման համար անհրաժեշտ չափով կանխավճար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողն իրավունք ունի գույքի փոխադրման համար օգտագործելու պահանջատիրոջ կամ պարտապանի տրանսպորտը՝ ծախսերը դասելով պարտապանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև պահանջատիրոջ հաշվին:

Կատարողական գործողությունների ընթացքում չօգտագործված գումարը կվերադարձվի Ձեր բանկային հաշվեհամարին:

ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Հ.ԱԲԱՋՅԱՆ**